Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 420 - Ա
որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր

«ՀԱՇՄԱՆԴԱՄ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՋԵՌՈՒՑՄԱՆ, ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՎ ՕԴԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ»

1.	Ծրագրի նպատակը	Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի, Վահագնի բնակավայրի 1-ին փողոց, 51 շենք հասցեում գտնվող՝ հաշմանդամ երեխաների վերականգնողական և ուսուցման կենտրոնի ջեռուցման, ջրամատակարարման և օդափոխության համակարգերի մոնտաժման աշխատանքների իրականացում, որի արդյունքում հնարավորություն կընձեռվի Լոռու մարզում ստեղծելու իր տեսակով եզակի կենտրոն, որտեղ սահմանափակ կարողություններով երեխաները/երիտասարդները, ըստ անհրաժեշտության, կարող են անցնել վերականգնողական՝ ֆիզիոթերապիայի, էրգոթերապիայի, արթոթերապիայի, երաժշտական թերապիայի կուրսեր, ստանալ լոգոպեդի, հոգեբանի ծառայություններ, մասնակցել կրթական, ուսումնական ծրագրերին: Ներկայումս կենտրոնի շենքում իրականացվում են ակտիվ վերանորոգման աշխատանքներ:
2.	Ծրագիրը բարեգործական որակելու նպատակը	Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3.	Բարեգործը	«Ջուլիէնջել» բարեգործական հիմնադրամ (ԱՄՆ)
4.	Ծրագիրը կատարողը	«Աստղիկ» բարեգործական հիմնադրամ (իրավաբանական հասցե ՀՀ, քաղ. Երևան, Տիգրան Մեծի պողոտա 24 շենք, բնակարան 30, ՀՎՀՀ՝ 00472741)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետության Լոռու մարզ, Փամբակ համայնք, Վահագնի բնակավայր, բնագավառը՝ սոցիալական
6.	Ծրագրի բյուջեն	12,704,790 դրամ

7.	Բարեգործություն ստացողը	Հայաստանի Հանրապետությունում ապրող սահմանափակ կարողություններով երեխաներ և երիտասարդներ
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2024 թվականի հունիսի 25-ից մինչև 2024 թվականի հուլիսի 25-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի, Վահագնի բնակավայրի 1-ին փողոց, 51 շենք, Հաշմանդամների վերականգնողական և ուսուցման կենտրոնի ջեռուցման, ջրամատակարարման և օդափոխության համակարգերի մոնտաժման աշխատանքների իրականացում՝ 12,704,790 դրամ: Նախատեսվում է իրականացնել 2024 թվականի հունիսի 25-ից մինչև 2024 թվականի հուլիսի 25-ն ընկած ժամանակահատվածում:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Ջեռուցման, ջրամատակարարման և օդափոխության համակարգերի մոնտաժման աշխատանքների իրականացում՝ 12,704,790 դրամ:
11.	Ծրագրի իրականացման կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի աշխատակազմ, Լոռու մարզի Փամբակի համայնքապետարան:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Ծրագրի վերաբերյալ սահմանված կարգով հաշվետվությունների ներկայացում «Ջուլիէնջըլ» բարեգործական հիմնադրամին, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված՝ բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

20.06.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ